

2 Hefleuchner
208. 208. 208. 208.
208. 208. 208. 208.

891. 99
2 - 35

1937

Ժողովրդական
 Լեզու

ԼԵՆԻՆԱԿԱՆ
 ԾՐՋԱԼԱՅԻՆ ՈՒՍՈՒՄԱՅԻՆ
 ՆՅՈՒՅԵՐԻՑ

891.99
 Լ-35

ԽԼ

1937թ.

391.99


-35

ս6

6 NOV 2011



ԼԵՆԻՆԱԿԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ



ՄԱՐՏ 1937.



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ «ԲԱՆԿՈՐ»-Ի

10 SEP 2013

33230
17617

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՈԼՈՐ ՁԵՐԿՐՆԵՐԻ ՄԻԱՑԵՔ

Հայկական
Ս. Ս. Ս. Ս. Ս.

527-38




168854

Ն Վ Ե Ր

Հայկական Խ. Ս. Հ. Խորհուրդ-

ների արտակարգ 9-րդ

ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ



Պատ. խմբագիր՝ Մ. ՄԱՐԳԱՐՅԱՆ
Շապիկը ԲՐՈՒՏՅԱՆԻ

Բաղիս № 1062

Լեւ. Տեղադրի պարամ, պատ. 767

Տիրած 1000 nr.



ԼԵՆԻՆԱԿԱՆԻ ՇՐՋԱՆԻ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ



ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ



Մ. ՄԱՐԳԱՐՅԱՆԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Ա. ՀՈՎՍԵՓՅԱՆԻ ու Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆԻ

Առաջարկումով լեզվ ծանոթություններով

ՅԵՐԿՈՒ ԽՈՍԿ

Հայկական ԽՍՀ-ի Խորհուրդների արտակարգ Գ-րդ համագումարին նվեր բերվող այս փոքրիկ ժողովածույի մեջ զետեղված է Լենինականի Երջանի՝ ոլիմպիադայում չերգված, արտասանված չի՝ պատմված հարուստ նյութերից մի մասը միայն:

Նյութերի հայտնաբերումը կատարվել է օնորհիվ այն բանի, վոր կուտագրված ոլիմպիադայի նախադաս-րասարքյան Երջանում առանձնակի ուշադրություն դարձ-րեց ժողովրդական ճաղկարի հայտնաբերմանն ու հավաք-մանը:

Այդ աօխասանքներին իրենց աղետիվ մասնակցու-րյունն են ցույց տվել պետարանի կոլեկցիվը յնվ Մ. ՀՈՎՍՏՓՅԱՆԸ, Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆԸ, Վ. ՊԵՏՅԱՆԸ յնվ Վ. ՆՈՐՅԱՆԸ:

ԽՄԲՍ.ԳՐԱՌԹՅՈՒՆ



ՀԱՎԱՔԵՆՔ ՅԵՎ ՄՁԱԿԵՆՔ ԺԱՂՈՎՐԻ- ԴՈՎԱՆ ՀԱՐՈՒՍՏ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆԸ

Ժողովրդական բանահյուսութիւնը միշտ եւ յեղեւ ե ու մնում ե դասակարգային:

Քե հին դարերում, յե՛լ թե Միջնադարում բանահյուսու-
թյունը վարդիակներն հանգես ե յե՛ղեւ վոչ միատարր՝ իշխան-
ներին զովեղեցու ե նրանց Վե՛ծ: զործերը ցույց առաւ համար,
ինչպես այլ ջանում են ազատեցել՝ բուրժուական—նացիոնա-
լիստ մեկնաբանները:

Աշխատավորը, ճորտը, եամէկը ստեղծել ե իր ֆուկլորը ե այն
հաշգըքել տիրոջներին բանահյուսութիւնը:

Ժողովրդական բանահյուսութիւն մե՛լ միշտ ել արտացոլում
են դանել տղն ատավորներին հույզերը, միշտ ու տառապանքը, թա-
խծն ու մորմոր: Վորն առաջացել ե տիրոջներին ամարդի ու
վայրապ շահագործումից: Սակայն միայն այդ չի յեղել բանա-
հյուսութիւն յլաւթը: Աշխատավորութիւնը իր ֆուկլորում տեսել
ե նաեւ այն լուսաւոր փարոսը՝ պայքարը, վորը նրան վողեկոչել
ե դեպի ազատութիւն, այստեղ նա հոռի չն, ե ինքնադիտ սկսու-
թյան արշալույսի թափանցող ճառագայթներն բարձրացնում են
նրա վողին ե նա դերագանցուպես յեղում ե պայքարի
յերէնը, զովերդում աշխատանքը:

Ահա թե ինչու ժողովրդական բանահյուսութիւնը հան-
դիսանում ե անցյալի ճանաչուլութիւն լաւագոյն փաստագրե-
րից մեկը:

Ուստի պարզ ե, վոր անհրաժեշտ ե հավաքել ե մշակման
յենթաբեկել վոչ միայն Հոկտեմբերյան հեղափոխութիւնից մոտ յեր
կու տասնյակ տարիներ հետո ստեղծված ֆուկլորը, այլ ե դարեր
ու՛րջ ստեղծվածը, վորը շատ բան կազ մեղ ե մեղ փոխքիսոյ
սերունդներին:

«Ամենախոր յեղ լիառ, գեղարվեստականորեն կատար-
յալ հերոսների թիպեր սեղծված են Վոլկոյի՝ աշխատա-
վոր ժողովուրդների բանավոր սեղծագործության մեջ»
(ԳՈՐԿԻ), Յեղ իրոք, ֆուլկլորին հատուկ են հերոսների հակիրճ և
կենդանի բնութագրերը, չկան յերկար դատողություններ, ճոռոմ,
ալիւլորդ խոսքեր, նրանք կոնկրետ են, սրամիտ և ընդհանրաց-
ված:

Ֆուլկլորի նշանավորությունը մեծ է:

Նա հսկայական նշանակություն ու կարեւորություն ունի մասնաւոր կուլտուրայի բարձրացման, դաստիարակման և
գեղարվեստական համույթ պատճառելու գործում:

ԱԼԷՔՍԵՅ ՄԱՔՍԻՄՈՎԻՉԸ խորհրդային գրողների հա-
մագումարում տրված էր գեղարվեստի մեջ նշեց, վոր նմայած այդ
կարեւորութեանը, մեր գրողները, առկալին չառ քիչ էան են
արեւ բանահյուսութեան գործերիկ հմուշների հազարազրման, մը-
շակման և այն աշխատավորական լայն զանգվածներին մոտեցնե-
լու գործում: Յեղ նշում դրանից, նա, իր յեղբարհակման խոսքում,
կոչ անելով գրողներին ասաց. — «ես վա՛ն եցե՛մ ձեր ժողովրդա-
կան բանահյուսությունը, սովորեցե՛մ նրանով, մօակեցե՛մ
այն: Այն աս է յուր և ապիս քե ձեզ, յեղ քե մեզ՝ Միու-
լլյան բանահյուսների ու արձակագրերին: Սյդ կոչ
վոր վերաբերվում եր նայել Հայաստանի գրողներին, անուշա-
դրութեան մատնից էին ղեկավարութեան որոք: Տրսցիկտաական
նաթիւնալիտական—հակահեղափոխական տակաւնները՝ Սիմոն-
յանը, Ալազանը, Բակունցը, Նորենցը և մյուսները, բզովելով
դավաճան թանջայնի հովանավորութեանից, կոծկում և ջանում
եյին արթիվներում մոխրացնել այն հարուստ, արժեքավոր սահղ-
ծագործութեանները, վոր ասղծել են աշխատավորական լայն
զանգվածները: Ստեղծագործութեաններ, վորոնք բարձր արվես-
տով պատկերում են անցյալի դժնդակ, մահաբեր այրուհետ որե-
րը և զովելգում, վորոքաւում մեր ներկա՝ ստալինյան դարաշր-
ջանի օւրբի և յերջանիկ կյանքը: Թարգախութեաններ յայդ
վարդեապետ սրիկանել, ժողովրդական պարզ ու վճիտ, միան-
գամայն անկեղծ բանահյուսութեան փոխարեն ջանում եյին
վերականգնաւնել նախնալիտական գրողներին՝ նրանց թթու
ազգայնական իդեոլոգիան, շղարշելով այն կեղծ ղեմաւորաւորով:
հետադարձութեանը ջանալով և գուրա շղարշելով զբաւան
առարարելից հակահեղափոխական այդ վիժվածներին, և բարձրա-
ցնելով կուսակցական զգոնութեանը գրականութեան մեջ

աշխատավորական լայն զանգվածների համար սահղծեց ել ավելի-
լայն հնարավորութեաններ, զարգացնելու իրենց բոլոր ունակու-
թեանները:

Կազմակերպված ինքնագործ արվեստի ու ստեղծագործու-
թեանների ոլիմպիադները, Հայաստանի բոլոր շրջաններում, ցույց
ալին, թե ստեղծագործական վորպիսի հարուստ զանգեք են թա-
նված մեր ժողովրդի մեջ: Զեռսելով ընդհանուր առմամբ, մենք կանգ
կառնենք մեր՝ Լենինականի շրջանում հայտնաբերված բաղնիքով
ու բազմապիսի նյութերից մի ջանալի վրա: Այդ նյութերի մեծ
մասը գրել ու հորինել են 50-80 և ավելի տարեկան ծերունիներ-
ը: Մեր հավաքած նյութերի մեջ հիմնականը կաղում է են հե-
քիաթները, առակները, բանաստեղծութեանները, աֆորիզմները,
ապա և բուն ֆուլկլորը՝ նրանց մեջ թունտ ծաղրի յեն յեն-
թարկվում կուլակը, տերտերը, քյոլովան, վեղերը, չիւովնիկը, թա-
գավորը, զաշնակցականները, նրանք, վորոնք դարեր շարունակ
անկուշա տղբուկի նման ծծել են հայ աշխատավորութեան արյու-
նը, նրա հաւալ բրախները:

Մեր հավաքած նյութերի մեջ գերակշռող տեղ են բռնում
այն յերգերը և բանաստեղծութեանները, վորոնց մեջ զգեցրդվում
է մեր յերջանիկ, ուրախ բերկրալից կյանքը և այդ կյանքը ստեղ-
ծողները՝ Լենին ու Ստալինը, բուշիվիկների պանծալի կուսակ-
ցութեանը նրա ղեկավարները Մոլոտովը, Մորոզովը, Անդրե-
կովիսի բուշիվիկների առաջնորդ Ռերիան և մյուսները:

Ձեռք ու անսահման նվիրվածութեան վորին և անբաւե-
տում ժողովրդական ձոներգներում, վորոնք նվիրված են համայն
աշխարհի աշխատավորութեան առաջնորդ ընկեր ՄԱԽՆԻՆ. 77 տա-
րեկան կուլտաեական Մյուսիասյան Մանուկն իր մտքին առում
« Զեռայած անգրագիւս եմ, բայց ապրելով նոր կյանքի ու-
րախութեանը, յեղ յնդաւնիկ ինկելով Սաւիկնի մեծ սիրով,
հորինել եմ սի Բանի ճաղեր: Անգրագիւս այն ծերունու բա-
նաստեղծութեանները լի յեն խորը սիրո և ստեղծագործող մա-
դու անմահական բոցով: Նա յերգում է այն՝ սիրո մասին, վոր
առում է մեր յերկրը և վայլ աշխարհի աշխատավորութեանը
գեղի մեծ Ստալինը և սոցիալիսական նվիրական հայրերը:
Նա իր «ՅԵՐԴԸ ՄԱԽՆԻՆ ՄԱՍԻՆ» տաղի մեջ առում է

«Ես անումը պիտի մնա հաւիթյան,
Մեզի համար պատկական ես Սաւիկն,
նւնենաւ յերկար կյանք, ով դու մեծ սիրով,
Մեր յերկրի մեծ ղեկավար Սաւիկն:

Տրոցկիստների կատարած անարդգ, սատր, պատմութեան միջ-
գետ շտեմնված վոհրագործութունները խորը դալույթ ու նստ-
կանք տալաքրին ամբողջ աշխարհի աշխատավարձի սրտե-
րում: Միեւրոնի Սուրբատյան Մանուկը, միլիոնների հետ ապրելով
սոյոսին և զամուս ստորներէց ստորներին և նրանց պարագլուխ
Հոռա, Ֆաշիզմի շուն Տրոցկուն: 65 տարեկան Մեկերյան Մեկերը
«Հայրենիքի դավաճաններին» բանաստեղծութեան մեջ, ցույց
տալով այդ մարդասպանների, բանդիտների անարդգ գործերը, ու-
րախութեան, վաղուսի ու հիտցմունքի խոսք և ստում պըդետա-
րական արդարադատ դատարանի վճարն Նա իր բանաստեղծու-
թյունը վերջացնում է հետևյալ խոսքերով:—

Ժամ իոկ ապրելու մարդիկ անարժան,
Ձեր գլխի տեղն եր սեղ կառախմարան,
Սիստո եր, մուլնիոկ գէղական անգամ,
Վոր դուք ստացաք ձեր գործին արժան:

75 տարեկան Երուկը (Մաթեւոսյան Ավագ) իր
տաղերի մեջ մեղակցնում է Ֆաշիստ շներին, Տրոցկուն, Պյա-
տակովին, Ռադկին, Զինովյեվին և մյուսներին: «Ի՞նչ, վեր-
նագրը կրող բանաստեղծութեան մեջ նա ցույց է առնում այն
ստոր, դադրելի ծրագրեր, վոր հեմերովան սրիկա արոցկիսանե-
րը կողմակերպել եյին ընկեր Մոլոտովի կյանքի դեմ: Իսկ մի
այլ բանաստեղծութեան մեջ «Հոգով ու սրտով յերկար կյանք
և խնդրում ընկեր Մոլոտովին Նա գրում է՝

Բանվորի, գյուղացիների ընկեր Մոլոտով,
Բեզ կյանք եմք խնդրում սրտով ու կողով,
Մեր խաղաղ առխարիք պահեմ անվերջով,
Սատիսի գործին անեղ Մոլոտով:

Մեր շրջանից հավաքված ժողովրդական յերգերի, բանաս-
տեղծութեաններ, ապա և բուն Ֆոլկլորի մեջ վաւուս, վալլ-
վում և խորհրդային հայրենասիրութեան վոգեն: Նրանց հեղի-
նակները լի հավատով են լցված դեպի Կարմիր Բանակը, դեպի
մարշալ Վորոխովը: Նրանց յերգերում կարսիւր թելի պես անց
նում է այն գիծը, վոր իրենց իրենց կյանքը, մինչև արյան վեր-
ջին կաթիլը կտան հայրենիքի ու մեծ Սատիսի գործի պահպա-
նութեանը: Ժողովրդական այս յերգերի մեջ իր ամբողջական ար-
տաքրուսն է դետել այն, վոր խորհրդային ժողովուրդների համար

առցիալիզմի վալեւընքը, արցիալիզմը դարձել է կենսական ան-
անհրաժեշտութիւն, այնպես, ինչպես ողջ մարդու համար:

Վ. Զանիլայի կրտսեակնան, 70 տարեկան Ավետիսյան
Մուրադը իր հորինած տաղերի մեջ գովերգելով Լենինին, Սեա-
կին և ցույց տալով մեր հզորութեանը, ասում է ժող ու մո-
խիւր կդարձնենք անարգ բռնամարտ, իսկ յեթ Ֆաշիստները
ցանկանան հարձակում գործել ապա՝ «Հզօր խորհրդայինը կու-
սա գլխներին, ալքեր բռնանա»:

Մեր յերկրը խորը վիշտ ապրեց սիրելի Սերգո Ռոյոնի-
կին: Մահով՝ մահուկներին սկսած մինչև ալհներ, դառաժալ
ծերունիները: Կարճ ժամանակի ընթացքում թանկագին Սե-
րգայի կորուստը արձագանք գտավ նաև ժողովրդական տաղերի և
բանաստեղծութեան մեջ: Կուսակցութեան պանծալի առաջնորդ-
ներին մեկի կյանքի ու գործունեութեան շուրջն արդեն ստեղծ-
վել են բազմաթիւ տաղեր:

Մեծ Պարսիկ կրտսեակութեան անդամ Սմբատ Հոխան-
յանը Սերգո Ռոյոնիկինի մահվան առթիւ գրած իր յերգում
ասում է.

Բյուրեղներով դու քանկագին,
Աղամանդե գանձ քողի,
Խաղաղ անմար, վորպես արիկ,
Մեր յերկրում ամծալածիք:

Հայ ժողովուրդը՝ բանվոր թե կրտսեակական ամեն մի
աշխատավոր կաթողին սիրով լցված, Անդրկովկասի ժողովուրդնե-
րի սիրելի դեկավար ընկ. Բերիւսին և ձոնում իր սրտից քնդած
ջերմ տաղերը: Նա յերգում է յերեք յերգարական ժողովուրդնե-
րի համերաշխ կյանքը, նա իր շնորհակալութեան և հայտնուս
թանկագին դեկավորին՝ ընկ. Բերիւսին, այդ համերաշխութեան
ամբողջութիւն և հայ դյուղը ունենիւր—կուստեղական դաքձնելու
նրա ըողնիկիայն աշխատանքի համար: Բնորոշ են այդ անասիկ
աւից կրտսեակական Սուրբատյան Մաքայի խոսքերը:—

Ենչեմ գովեմ, քիչ է բեզի,
Ենեմ քան ես ցվի մեզի՝
Համերաշխ կյանք յերեմ ազգի,
Դու սիրելի, ընկեր Բերիւս:

Այս բոլորից բացի, ժողովրդական բանաստեղծութեան, ա-
յտուկների տաղերի նյութ է դառնում մեր կրտսեակութեաններին,
գործարանների տարալ կյանքը: Աղբուրդի կրտսեակական, 60
տարեկան Հերթակցյանը, իր կողմից հորինած յերգերում («Տը-
րակալար»,—«Կրտսեակութեան») վառ գույներով ժողովրդական

անդամներով խորհրդով գործադրում է համայնական աշխատանքը: Վերին Հանլիշայից 35 տարեկան Նուսիկ Պաղտյանը նկարագրում է իրենց կողանտեսութան հարստութիւնը և այն յեղջանիկ կյանքը, վերն ոտեղծվել է հենց իրենց գլուղում՝ Հանլիշայում:

Սաալինյան փառահեղ Սահմանադրութիւնը, վերն արդեն կյանք ու մարմնացում է առել մեր մեծ յերկրում, դարձել է աշուղների, կողանտեսական աշխատավորների յերգի առարկան: Նըրանք յերգում են Սահմանադրութիւն ընդած ընդիջները, նրա համաշխարհային նշանակութիւնը, և այդ Սահմանադրութիւնն սեղծող մեծագույններից մեծագույնին՝ ընկեր Սաալինին:

Աշուղ Ավան, ընկեր ՍՏԱԼԻՆԻ և Սահմանադրութիւն մասին գրած իր «Վոդլույն Սաալինյան Սահմանադրութիւնը» յերգում ասում է՝

Մենք մեր բացված կամփր վարդ ունենք,

Պաղպտի պես տմուր մարդ ունենք,

Սաալինի պես համձարեղ օղամարդ ունենք,

Վաղջույն Սաալինյան Սահմանադրութիւն:

Կազմելով այս ժողովածուն մենք կատարել ենք նյութերի վերջը դասավորում, ինչպես կ'էկատի ընթերցողը:

Առաջին մասում դետեղված նյութերը լավագույն արտահայտութիւնն են մեր այսորվա կյանքի, և այն տեղաշարժերի, վորին ներկա է յեղ մասնակից է ինքը՝ ժողովուրդը:

Պարզ, անկեղծ, յուրահաստուկ, բնորոշ ըստերով ժողովուրդը յերգում է ԼԵՆԻՆԻՆ, ՍՏԱԼԻՆԻՆ. 40 տարեկան կիսազրապետ, կոլտնտեսական Խաչատրյանը գրում է.

Վարդամն եմ, գրում եմ այս բառյակները,

Մրտիցս դուրս չի գա քո այդ վառ սերը,

Դու մեր հոգատարն ես, կարագաս ինքը,

Ծնողից եղ բանգ ես, ընկեր Սաալին:

Ժողովրդական տաղերի, բանահյուսութիւն մեջ՝ ՍՏԱԼԻՆ—այդ նշանակում է հաղթանակ, հոստատակամ առաջնութեց, մեր յերկրի հզորութիւն:

Ժողովածույի յերկրորդ մասը ամբողջապես վերաբերում է նոր և հին գյուղին՝ Նյութերի ընթերցումը, առաջին իսկ հայացքից, ցույց է տալիս այն կոնաբաստը, վորը կա նրանց մեջ:

Նորը, կոլեկտիվ կյանքը՝ դա ուրախութիւն է, խնդութիւն, լուսավոր, կուլուրական, ազատ կյանք:

Հինը՝ մոայր, մութ, խավար՝ ուր մարդը զրաւը դասում, դասարկ եր նստում: Նրանց մեջ ցույց է տրվում, թի ինչպիս կուլակը, քովսին, տերտերը, հինսկիկը, թագավորը, դաշնակը կողոպտում, թալանում էին աշխատավորութիւն «առաջարկաւստիկ»: Ժողովածույի 3 ըդ բաժնում անդ են գտել ժողովրդական այն յերգերը, վորոնք դերագանցապես յերգում են սեղը, աշխատանքը: Այդ յերգերը հին են, նրանք սկիզբ են առել հարյուրամյակներից, բերնեբերտ անցնելով հասել են մեզ: Նշանակելից է «Նորովելը», ապա և «Կալի յերգը»: Այս յերգերն առում է հարյուրամյա ծերունի Հովհաննիսյանը, վորը «Հոռովի» և «Կալի յերգի» մեջ գնում է այն թախիծը և գրա հեռ մեկտեղ այն անսանձան սերը, վորը նա տածել է գեղի իր աշխատանքը և դարեր շարունակ միացել ձեռնունայն: Մեր ոլիմպիադան հայտնաբերեց Բաղայլաններ լուսավորումը սերունդը: Բաղայլանները Դյուզբայանցի յին Սշուղ Բաղալը՝ Բաղալյանների նախահայրը, ապրել է մեզանից մոտ 150 տարի առաջ: Նա վաղեմի Դյուզբայանցից գնացել է մրնչկ Բյուզանդիոն (Գոլիս) և ախտեղ ծանոթացել հայտնի բանաստեղծների հետ: Նա գրել է և յերգել պարսկերեն, նրա մահից հետո Բաղալին հաջորդել է տղան՝ Յեղոն: Սա նույնպես աշուղական յերգեր է գրել ու յերգել:

Նրա յերգերը թախտոտ են, մերժված, սիրո դառնութիւնը լիցուն: Հարուստներից, աղալարներից վտանաւարված, ճղոված ու ճնշված հյուսն Յեղոն յերգել է դլխավորապես իր սրտի դառնութիւնները:

70 թվին մեռնում է Յեղոն: Նրա «արհեստը» անցնում է նրա աղային՝ Սարիբեկին, վորը հիմա 73 տարեկան է և Դյուզբայանցի կոլտնտեսութիւն անդամ: Սարիբեկն էլ յերգեր հորինում: Անցյալում նա յերգել է իր հորինած յերգերը և նրան չըրջանում շրիլը Սարոս յեն ասեր Սարոն անդրագետ է, նրա հորինած յերգերը գրի յե առնում իր թոը, պիտներ Աղամպարը: Սարիբեկի աղան՝ Սայաղը նույնպես յերգեր է հորինում: Սայաղի աղան, 12 տարեկան Վաղլոյան նույնպես վտանաւորներ է գրում: Յեղ այսպես, սերնդե սերունդ յերգել և Բաղալ-

յաններն շնորհալի սերունդը:

Մենք այդ մասին կմտցանք շրջա-նային ուղիմղիադարյուն միայն:

Այս ժողովածույի վերջում գետեղել ենք Նահապետ Բիձի առակները: Նահապետ Բիձան 70 տարեկան է: Ապրում է Նայ-բանդում: Նահապետ Բիձան իր առակներով ցույց է տալիս վե-զիրներին, թագավորներին (Վեզիրի մի շահին) շահագործածան մե-թողները, վորոնք չեն լին կանգնում վոչ մի միջոցի առաջ, ժողո-վուրդին պոկելու և հարստանալու համար: «Տեր հոր գլուխը» կամ «Տեր Թաքլմը» Նահապետ Բիձի այն առակն է, վորով նա-դեռ իր ժամանակին, պատռել է քառանայի գիմաղը, նրա տգիտու-թյունը՝ «անգլուխ» լինելը:

«Այս առակները կուգան հմեմ», ասում է Նահապետ-Բիձան: Աշխատավորութունը՝ յերբեմն պարզ, յերբեմն՝ արեւո-րիկ, ստեղծել է իր առակները, խրատները և նրանցով ծագել է հարստահարողներին, պայքարել նրանց դեմ:

Հենինականի շրջանը հարուստ է առակներով և ժողովրդ-դական «Համով ու հոսով» հեքիաթներով: Նրանք սպասում են իրենց հավաքողին, նրանք արժանի յեն լայն ընթերցողների ուղարկությանը: Իբր մասին է, վոր պիտի հոգա Հայաստանի նյութական կուլտուրայի ինստիտուտը:

Հենինականի շրջանային ուղիմղիադան այս ուղղությամբ զգալի բան կատարեց: Մենք անհրաժեշտ ենք դրնում առել, վոր այս ժողովածույի մեջ կլինեն զգալի թերություններ, վորոնք պարզ առած, հետեւանք կլինեն մեր անփորձությանը: Կազմելով այս ժողովածուն, մեր հիմնական նպատակն է ընթերցողներին ցույց տալ Հենինականի շրջանում յեղած ժողովրդական տաղերի, բա-նասեղծությունների և առակների միայն փոքրիկ մասը, վո-րոնք ընթերցվել, յերգվել և պատմվել են ուղիմղիադարյուն ժողո-վածույուն գետեղված նյութերը յենթարկել ենք վորոշ խմբա-զման:

ԱՆԴՐԱՆԻԿ ՀՈՎՍԵՓՅԱՆ
ԱՐԱՍ ԳՐԻԳՈՐՅԱՆ.

ԹԵՐԳԵՐ ԼԵՆԻՆԻ, ՄՏԱԼԻՆԻ ՑԵՎ
ՆՈՐ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ.



168854

Լ Ե Ն Ի Ն

Պարլ—Մարքսի հիմքերի վրա,
Հիմք դրավ ընկեր ԼենինՆԸ,
Ամուր պարիսպներ շարեց,
Անմահ ընկեր ԼենինՆԸ:

Լենինը աշխարհք ման եկավ,
Ստալինին ընկեր գտավ,
Հետո Պետրոգրադն առավ,
Անմահ ընկեր ԼենինՆԸ:

Համագումարի մեջ խնդր դրեց,
Ուսումնարաններ շինեց,
Մեր ապագա հոգսերը քաշեց,
Անմահ ընկեր ԼենինՆԸ:

Իլյիչը խորունկ մտածեց,
Ազատություն ստեղծեց,
Բանվոր-գյուղացուն ազատեց,
Անմահ ընկեր ԼենինՆԸ:

Նիկոլ ցարեն վրեժ առավ,
Հայաստանին արև տվավ,
Ազատ որենքներ դրավ,
Անմահ ընկեր ԼենինՆԸ:

Հանգստություն Վլադիմիրին,
Մեզ համար զոհված ընկերներին,
Տապալեց անգութ Նիկոլին,
Անմահ ընկեր ԼենինՆԸ:

Մաղաքն եմ Դիրաքլարցի,
Միռլեթյունը յես հարգեցի,
Կրկնկտիվ մտա, լավ ապրեցի,
Անժառ ընկեր Լենինը:

Հորինել եմ Սուբխայան Մանուկը, աշուղական անունը՝
Մաղաք:

Նա 77 տարեկան ե, կոլտնտեսության անդամ Սադաթն
հորինում ե յերգում ե:

Անդրազետ լինելու պատճառով, նա իր յերգերից ե վոչ
մեկն ել գրել չի առել: Նրա, կոլտնտեսության մասին գրած յեր-
գերից յերկուսը ղետեղում ենք այս գրքի համապատասխան բառ
միջնորդ:

ՄԵԾ ԼՆՆԻՆԻՆ

1917 թվի հոկտեմբերին,
Հաղթանակ տարավ մեր առաջնորդ մեծ ընկեր
Լենին:

Տապալից չաք բռնակալին,
Ազատություն բերավ սովետ աշխարհին:

Ձեր մեծ անունը չենք մոռանա հավիտյան,
Ուսմունքդ տարածված ե աշխարհքով համայն,
Ափսոս վաղաժամ իջար գերեզման,
Անմոռանալի, թանկագին ընկեր Լենին:

Մեր մեծ առաջնորդ ընկեր Լենինը
Աշխարհին տիրեց, բուրժուին ատելով, քյասիրին սիրեց,
Բոլորին հավասար ընկեր անվանեց,
Անմոռանալի յես, ընկեր Լենին:

Հին Գյուլսերին ձեր անունով դառավ Լենինական,
Ավերակից ազատվավ, յեղավ քաղաք իսկական,
Կողքին կառուցվեց տեքստիլ գործարան,
Բանվորն ու գյուղացին կապրեն ուրախ:

Կեցցե մեր առաջնորդ ընկեր ՍՏԱԼԻՆ,
Խաղաղություն բերավ ամբողջ աշխարհին,
Կյանք են վայելում բանվոր-գյուղացին,
Գլխակոր ամաչում ե պան յեվրոպացին:

Ֆաշիստ Գերմանիան ու նրա շուն Ժրանկոն
Բանդիտի նման կռվա՝ կխորտակի «Կոմսոմոլ»-ին

Այդ չար միտքը թող նրանք մոռանան,
Հղոր խորհրդային կուտա գլխին, աչքեր քոռանա՜

Յեկրոպայից պալում ե մեզ վրա վոռնոց,
Դեռ չեն տեսել խորհրդային թնդանոթի վորոտոց,
Յերկինք են բարձրանում սավառնակ Տ մոտորանոց,
Հող ու մոխիր կգարձնենք անարգ թշնամոց:

Հորինել ե Վերին Ղանլիջայի կոլտնտեսական, հարվա-
թային սահակ, 70 տարեկան ՍՈՒՐԱԴ ԱՎԵՏԻՍՅԱՆԸ: Մուրա-
դը հորինել ե մի շարք լազեր իրենց ե հարեվան կոլտնտեսու-
թյան սշխատանքնելի մասին: Նա իր հորինած բանաստեղծու-
թյունները յերգում ե ինքնուրույն, հարմարեցրած յեղանա-
կով:

ԸՆԿԵՐ ՄՏԱԼԻՆՆ.

Բնչպես ջինջ յերկնքից պայծառ արեվը՝
Տաքացնում լույս ես տալիս, ընկեր ՄՏԱԼԻՆ,
Բազում ազգերի աշխատավորներին՝
Ազատության հույս ես տալիս, ՄՏԱԼԻՆ:

Կյանքումդ տեսել ես շատ աքսոր ու բանտ,
Դո կամքդ ամուր ե, պողպատ ե՝ անպարտ,
Բեզնով հպարտ են բազում ազգ ու մարդ,
Յերջանկություն, կյանք ես տալիս, ՄՏԱԼԻՆ:

Ուսումդ առել ես Մարքսից—Լենինից,
Ճշտությամբ տանում ես բոլշևիկյան գիծ:
Լենինի մոտ շատ ես հարգվել ամենից,
Կոմկուսի դեկավար, ընկեր ՄՏԱԼԻՆ:

Պատվով կատարեցիր պատգամը մեծի՝
Տվեցիր յերկրին բազում յերկաթ—ձի,
Վորքան խոսքան հող կար, դրվեցին գործի,
Կալեկտիվ—նոր կյանքի վարպետ՝ ՄՏԱԼԻՆ:

Դարձար հիմնադիրը մեր նոր որենքի,
Հոգատար վարպետ մեր այս լավ կյանքի,
Հմուտ դեկավար համայն աշխարհքի,
Վողջ մարդկության սրտի սիրած, ՄՏԱԼԻՆ:

Վարդանն եմ, գրում եմ այս քառյակները,
Սրտիցս դուրս չի դա քո այդ վառ սերը,
Դու մեր հոգատարն ես, հարազատ հերը,
Ծնողից ել թանգ ես, ընկեր ՄՏԱԼԻՆ:

Հորինել ե Ղալթադչեի, Կիսագրագետ ՎԱՐԴԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆԸ,
Նա 45 տարեկան ե, ստախանովական կոլտնտեսական: Նա իր
հորինած ապերը յերգում ե հարմարեցրած յեղանակով:

ՀԶՈՐ ԵՍ, ՄԵԾ ՍՏԱԼԻՆ

Քո հզորութիւնը անհաղթ է,
Բոլոր բուրժուական յերկրներին կը հաղթե՛.
Ժողովրդին համար մեծ բախտ է,
Հզոր ես դու, մեծ ՍՏԱԼԻՆ:

Թող լավ իմանան քո հզորութիւնը,
Մոսկվա շինված է մեր մեծ տունը,
Ժողովրդին համար կտրել ես քո քունը,
Հզոր ես դու, մեծ ՍՏԱԼԻՆ:

Կտրի Մաքսի գաղափարը՝
Դըղել ես դու սար ու քարը,
Հեռացրիր մեզնից արորով վարը,
Հզոր ես դու, մեծ ՍՏԱԼԻՆ:

Բոլոր ժողովրդին դու արեւ,
Բանվոր Ասատուրս քեզ կասեմ՝ բարեւ,
Ուրախալի դարձրիր մեր որը սեւ,
Հզոր ես դու, մեծ ՍՏԱԼԻՆ:

Քրել է Աղբուրդի կոլտոզի անդամ և Ղալթաղչի կայարանի սլաքավար՝ կիսադրոգեա, 50 տարեկան՝ ԱՅԱՅՈՒՄ ՀԵՐԹԵՎՅԱՆԸ

ՊԻՏԻ ՄՆԱ ՀԱՎԻՏՅԱՆ

Քո անունը պիտի մնա հաճիտյան,
Մեզի համար պատվական ես ՍՏԱԼԻՆ,
Ունենաւ յերկար կյանք, ով դու մեծ տիտան,
Մեր յերկրի մեծ ղեկավար, ՍՏԱԼԻՆ:

Անգութ ցարի ձեռքից մեզ ազատեցիր,
Մեր նոր հայրենիքը դու զարդարեցիր,
Բատրակ, չքավորին դու պաշտպանեցիր,
Մեծ Լենինի գովականն ես, ՍՏԱԼԻՆ:

Հոկտեմբերին յեղավ ազատութիւնը,
Կեցցե խորհուրդայինը, կեցցե Միութիւնը,
Հաստատեցիր այսօր Սահմանադրութիւնը,
Յեղրոպայից գիտնական ես, ՍՏԱԼԻՆ:

Կարմիր բանակի պետ ՎՈՐՈՇԻԼՈՎԸ,
Անվախ աշխատում է մեր էԻՏՎԻՆՈՎԸ,
Ախոսս, հազար ափսոս, ընկեր ԿԻՐՈՎԸ,
Ընկերներին համար բառարան ես, ՍՏԱԼԻՆ:

Կեցցե Լուլիգիւն, կեցցե յուր գատը,
Գնդակահարեցին շուն Տրոցկու խմբակը,
Գնդակով են մաքրում դավաճանը, վատը,
Այդ է դրոստը, իմ թանկագին ՍՏԱԼԻՆ:

Ընկերներդ ապրեն, գիտուն ՍՏԱԼԻՆ,
Հավատարիմ ՄՈԼՈՏՈՎՆ ու ԿԱԼԻՆԻՆ,
Ախ, ինչ խոսքեր ասեմ ՈՐՋՈՆԻԿԻՋԵՅԻՆ:
Մեր բոլորիս սիրելին ես, ՍՏԱԼԻՆ:

Հորինել է Յուրիապոլի Մանուկը:

ՄԵՐ ՀԱՅՐ ՍՏԱԼԻՆԻՆ

Ապրում ենք հանգիստ մեր խաղաղ աշխարհում,
Ի շնորհիվ քեզ, մեծ հայր Ստալին,
Մենք տեր ենք դարձել ուրախ կյանքին,
Ուրախ ենք քեզանով, մեր հայր Ստալին:

Քո հիմնական որենքի բոլոր կետերը,
Մեր խաղաղ յերկրի սիրտն է դառե,
Յերջանիկ, ուրախ, ունեւոր կյանքը,
Անմար արեւակ, վառ լուսն է դառե:

Լկտիացած դադան Տրոյկուն նայե,
Փաշիստ Գերմանիայի շունն է դառե:
Իք նման ավազակ մարդիկ է ճարե,
Մեր խաղաղ յերկրին հին դավաճան է:

Աշխարհի բուրաստան, լուսատու ծաղիկ,
Գովելու արժանի հոգեկան հայրիկ,
Որովա նստած ես, կենսատու աստղիկ,
Սիրելի առաջնորդ, մեր հայր Ստալին:

Անունս Ավագ ե, գյուղ Դալթաղչի,
Ազգս Միլթարյան, անդամ կոլխոզի,
Ամբողջ ընտանիքով սիրում ենք քեզի,
Մեծ հարգանքի արժան, մեր հայր Ստալին:

Հորինել ե Դալթաղչի գյուղի կոլտնտեսական Ավագ Միլթարյանը, կիսադադեւ, 30 տարեկան, անցյալում յերկար ժամանակ յեղել ե բատրակ:

ԻՄԱՄՏՈՒՆ ՍՏԱԼԻՆԻՆ

Քարի արմատի, հարադատի,
Շատ կայունն ես դու,
Խիւտ պատվական ես դու,
Պես մի հատի,
Ինձ խրատի,
Փիտնական ես դու:

Լույսի նման ես դու,
Հասակդ ծաղիկ և գեղեցիկ
Վարդ ես անթառամ,
Հոտդ ա աշխարհին համ,
Պտղալի ծառից,
Վարդ, մեխակ, շուշանից
Մաքուր բան ես դու,
Սրտիս լավն ես դու:

Ունիս մեծ անուն,
Իսկն հաստատուն,
Միրուն մաքով ես,
Գործով անմահ ես,
Մազմանյանիս արեւն ես,
Անմահ ես դու, ՍՏԱԼԻՆ:

Հորինել ե նալբանդի կոլտնտեսական, 60 տարեկան կիսադադեւ Կիրակոս Մազմանյանը: Կիւրախն ունի մի յարք այլ խողբ, նվիրւած Լենինին, Ստալինին և կոլաւն առաւելյանը: Նա ունի լավ ձայն և յերգում ե իր հորինած երգերը: Այս ապրը յուրահատուկ ե իր ձևով:

ՆՎԵՐ ԸՆԿԵՐ ՄՏԱԼԻՆ

Սորհուրդներէ պաշտպան, հույս ապավենը,
Գաղափարդ վսեմ, ընկեր ՄՏԱԼԻՆ,
Ամբողջ Յեվրոպայում լավեց քո ձեռնը,
Նոր աշխարհ կառուցող, ընկեր ՄՏԱԼԻՆ:

Ընկեր Լենինին դու հետեւեցիր,
Իւ գրվածները դիւի տաքածեցիր,
Նրա մահից հետո կյանքով վողջ կեցիր,
Վողջութեան արժանի, ընկեր ՄՏԱԼԻՆ:

Սիրում ես աշխատող, կատես կուլակը,
Հարկավոր կհամարես նրա կորուստը:
Բարոյական մտքով այդ ե դրուստը,
Վորքեկներին ցավեցող, ընկեր ՄՏԱԼԻՆ:

Մեր վողջ ժողովուրդը, դարձրիր գրազետ,
Զարգացրիր ուսում, արհեստ իրար հետ,
Դեղատու բժիշկ ես, կենսատու վարպետ,
Հզորներեց հզօր, ընկեր ՄՏԱԼԻՆ:

Նոր կեկոնիդ մատաղ, հոտավետ վարդ ես,
Դասակարգի պայքարով, աշխարհի դարդ ես,
Բարեխիղճ, անվեհեր, գործունյա մարդ ես,
Հեռատես, գուգակող, ընկեր ՄՏԱԼԻՆ:

Թղթի վրա Ձեր նկարը տեսել եմ,
Բաջութունդ շատ-շատերից լսել եմ,
Գործիդ վրա վոտանավոր հյուսել եմ,
Գովելու արժանի, ընկեր ՄՏԱԼԻՆ:

Անունս Կարապետ, Լենինականցի,
Ութը համար տուն, տասներեք փողոցի,
Գերդաստանս տասներկու անձի,
Ձեր շնորհիվ յերջանիկ ընկեր ՄՏԱԼԻՆ:

Կարապետ Ամի

71 տարեկան, ապրում ե Լենինականում, ոտանոտ ե կենսաթոշակ

ԼՍԵՅԵՔ ԸՆԿԵՐՆԵՐ

Լսեցեք հիմա, ձեզ պատմեմ մի բան՝
Ստալինի գործը լսեց Յեվրոպան,
Քանի, վոր բոլշևիկ կոմունիստներ կան,
Վոր մի վտանգ չի պատահի Հայաստան:

Կորչի բուրժուան իր սեվ բանդայով,
Դաշնակը մեզ մորթեց իր քոռ դանակով,
Սար ու ձոր լցրեց մարդկանց գիակով,
Են ինչ անխիղճ գործ եր տեսավ Հայաստան,

Բոլշևիկը յեկավ մեզի աղատեց,
Թշնամու ձեռքից մեր կյանքը փրկեց,
Ամբողջ Հայաստանը կոլխոզնիկ գրեց,
Այս ինչ ազատ կյանք ե Հայաստան:

Բոլշևիկը յեկավ աշխարհը տիրեց,
Ցարի բռնությունից մեզի ազատեց,
Պողպատ Ստալինը նոր որենք գրեց,
Կեցցե միշտ հավիտյան, մեր հայր ՍՏԱԼԻՆ:

Ներկայումս յես կապրեմ Դոնալդուան,
Անունս Ադամ ե, ազգս Բողոյան,
Քանի, վոր մեզ մոտ կոլեկտիվներ կան,
Կբարձրանա վերեվ յերկիրն Հայաստան:

Հորինել ե Դոնալդուան գյուղի կոլանտեսական, կիսաբա-
զետ ԱԴԱՄ ԲՈԶՈՅԱՆԸ, նա 75 տարեկան ե

Աղամն տուեմ ե նայել առաջնեք, հեքիաթներ, ե աֆորիզ-
ներ:

ՆՈՐ ՈՐԵՆՔ ՍՏԵՂԾՈՂ ՄԵԾ ՍՏԱԼԻՆԻՆ

Դու տվեցիր նոր որենքով յերջանկություն անսահ-
ման,
Յեզակի յե պատմության մեջ, փայլում ե մեր ապա-
գան,
Ջան իմ յերկիր, բերկրանքի ծով, դու միակն ես աշ-
խարհում,
Աստղերն անգամ փարվել կուղեն անապական քո հո-
ղուն:

Դու միակն ես, չկա ուրիշ ազատ յերկիր կենարար,
Ծիլ ու ծաղիկ, արեվ—լուսին, ժպտում են քեզ սիրա-
վառ,
Քո կրծքի տակ մեղր ե ծորում, հստակ բյուրեղ անըս-
պառ,
Մեզ կյանք տվեց, նոր ջահ վառեց, նոր Որենքը ստա-
լինյան:

ԳՐԻՇԱ ԳՅՈՒԵՅՅԱՆ.—45 տարեկան, արտասանել ե ոլիմ-
պիապայում:

ՈՐԵՆՔԸ

Ինչպես, վոր չքնաղ լաղուր յերկնքում
Աքեմն ե շողում՝ հզոր ու անպարտ,
Նույն ուժով այսոր ամբողջ աշխարհում,
Հնչում ե փայլուն նոր յոսնման հպարտ:

Այդ վես, հոյաշեն ու լայնածավալ
Մեր յերկրի որենքն ե նպարդ ու հստակ,
Վորի մեջ ե սեգ ջահը լուսավառ,
Մեծ ժողովրդի կորովն անխորտակ:

Մի վառ փաստաթուղթ յերջանիկ կյանքի,
Աշխատող մարդու ջանքերի վաստակ,
Վորը փառապանծ ժողովուրդների
Ուժն ե ցույց տալիս, խնդր բովանդակ:

Քեզ կոեց, կոփեց Ստալինը մեծ,
Այդ անդուգական մարդն իմաստուն,
Այն մարդը, վոր հին կյանքը հրկիզեց
Ու դարձրեց ներկան դյուցադնեղություն:

Այսոր աշխարհի ծայրամասերից
Վողջունում են քեզ բյուրավոր սրտեր,
Ու քո կենարար, մաքուր լույսերից
Հյուսում են նոր-նոր պայքարի հույզեր:

Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ.—Բայանդուրի կոչման համար, աղբյուր
ստանիլ ե ուղիղագրություն:

ԲՆԿԵՐ ԲԵՐԻԱՅԻՆ

Ինչքան գովեմ քիչ ե քեզի,
Ենքան բան ես տվել մեզի՝
Համերաշխ կյանք յերեք ազգի
Դու սիրելի ընկեր ԲԵՐԻԱ:

Սադա առա զարկի թելին,
Ձենը ընկավ մեջ աշխարհին,
Պիտի գովեմ մեր Բերիային,
Անդր յերկրի զնկավարին:

Յեա Սաքոն եմ, կոչսոցնիկ եմ,
Յերգով քեզի պիտի հայտնեմ—
Հարուստ կյանքի մի անդամ եմ,
Յերգս քեզի նվեր, ԲԵՐԻԱ:

Սադա առա յիւր սարը,
Ծով ե դառել հանդի բարը,
Շորոր կուգա մեր ջրանցքը,
Ջան սիրելի, ընկեր ԲԵՐԻԱ:

Տղերք ունիմ մեկ—մեկ ասլան,
Իրկուն կեղնի գերք կլարդան,
Քո խոսքերը բուռնվիկյան,
Կավ կսիրտեն, լավ կիմանան:

Ինչպես գովեմ մաքիդ ուժը,
Վոր մեզ տվեց առատ հունձը,
Ուրախության ծով ե առնը
Հայ հին տունը, տվեր բուռն:

Ստալինից շատ սովորեցար,
Մեզի համար սիրով դարձար,
Դու արեւից անառ բացվար,
Մեր սիրելի, ընկեր ԲԵՐԻՍ:

Յես Սաքոն եմ, յերգել գիտեմ,
Ժողովրդոց գովքը կենեմ,
Մազիս ձենը բխլբուլ բերեմ,
Քեզի համար, ընկեր ԲԵՐԻՍ:

Հորինել է յերգում է կալանատեսիկան Յապետ Մուսկատյանցը,
61 տարեկան, կիսագրագետ:

ԿՈՒՏՆՏԵՍԱՅԻՆ ՅԵՎ ԱՅԼ ՅԵՐԳԵՐ

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻՆ

(ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌՅԻՎ)

Մեր կյանք ու ապավեն, ո՛վ Կարմիր Բանակ,
Ցրեցիր քո ուժով Վրանգել, Կոլչակ,
Կորավ նրանց հետ յե՛վ զորք յե՛վ բանակ,
Կարմիր Բանակի դեմ միշտ այս ու ծանակ։^{*})

Պետք է պինդ պահել Կարմիր դրոշակը,
Կեցցե հեղափոխության վեհ հիշատակը,
Կեցցե մեծ Ստալինի Կարմիր Բանակը,
Թող միշտ ավելանա թիվն ու քանակը։

Կեցցե կոմունիզմն ու լենինիզմը,
Կեցցե Մոսկվան, խորհուրդն ու նիստը,
Կեցցեն Կարմիր Բանակի քաջ մարտիկները,
Նրանք են պահպանում յերկրիս հանգիստը։

Մոտեցավ 20-րդ տարեդարձը,
Ձեզնից է կախված փրկության հարցը,
Ծերուկս ձեզ տեսնեմ ընդմիշտ բարեկամ,
Վայելեք յերջանիկ կյանք ու բարի համբավը։

^{*}) Ամբաստան ու ծաղրված,

Ծերժող (Ավագ Մաթևոսյան) 75 տարեկան, կիսազրազեռ,
յերկաթ ժամանակ յեղել է քարառջ։

ՀԱՅՐԵՆԻՔԻ ԴԱՎԱՃԱՆՆԵՐԻՆ

Աշխարհը սոսկաց ձեր արարքներից,
Յերկինք գղրղաց ձեր չար դործերից,
Այն, ինչ կատարեց ձեր անարգ բանդան,
Ձեր մեծ բանդիտի ստոր պատվիրան:

Վնասարարի, մատնիչի դերում,
Նմանվող չունեք պատմության հշում,
Ներոնն անգութ, վոր Հոռմն օյրեց,
Ձի կարող հասնել վոճրին ձեր մեծ:

Թե դուք յեւ թե ձեր պետ՝ ստոր Տբոցկին.
Սոսկալի դավեր նյութիք հատակից,
Խիղճը դեն թողած, ձեր ստոր վոճրով
Մահ եյիք նյութում, ուր կյանքն եր ծաղկում:

Ու գութն եր մեռած ձեր սրտի խորքում,
Ամոթի նշույլ չկար ձեր դեմքում,
Դավաճաններն ստոր ուղիով,
Ձեր խիղճը ծախիք անարգ պաշտոնով:

Ապա վատարար հանձնառու յեղաք —
Քարուքանդ անել մեր շինն ու քաղաք,
Համաձայնեցիք ստոր թշնամու,
Բռնության լուծն ընդմիջող կրելու:

Փամ իսկ աղբելու մարդիկ անարժան,
Ձեր գլխի տեղն եր սեւ կառաւինարան,
Ափսոս եր նռնիսկ գնդակն անգամ,
Վոր դուք ստացաք ձեր գործին արժան:

ՄԵԼԻՔԱՆ ՄԵԼԻՔ ՅՑ տարեկան, յերկու ժամ տեւող
խառնել է յերկաթի մեջ, զորպէս բանդոր:

ԿՈՒՈՈՉԻ ՅԵՐԳԸ

Մեկ լսեցէք իմ խնդիրը,
Շատ լավ բան է կուեկտիվը,
Կեցցեք թան ծրարիւրը,
Ապրիս կուեկտիվ, կուեկտիվ:

Տրակտորները բանում են,
Շարքացաններով ցանում են,
Էլովին քերք առանում են,
Ապրիս կուեկտիվ, կուեկտիվ:

Դանք վոր յնո անհատ եյի,
Ձոր ու դիշեր կղատեյի,
Եյի Դաշար, անանկ եյի,
Ապրիս կուեկտիվ, կուեկտիվ:

Յներք վոր յնո կուեկտիվ ժառ,
Բակազան ապրումառաջ առա,
Կուեկտիվը աշխոր կառ,
Ապրիս կուեկտիվ, կուեկտիվ:

Վերացալ պութանն ու աքորը,
Գորշի հինը, կեցցեք նորը,
Քյաքան բան է իմ խնդիրը,
Ապրիս կուեկտիվ, կուեկտիվ:

Կեցցեք պերկի բրդաղը, *)
Հասկանալով դատով լավը,
Վերացալ դեղի անհատը,
Ապրիս կուեկտիվ, կուեկտիվ:

*) Սա կոչանքն էր յան առաջադր բրդաղն է.

Յես Սայադն եմ ստախանով,
Հասկացել եմ ամեն բանով,
Աշխատում եմ յես մեծ սիրով,
Ապրիս, կուրկտիվ, կուրկտիվ:

Հորինել ե Գյուզգյամդի կոյսնեհ սակամ Մայազը՝ ա-
ռուղ Սաւրբեկ Յեղոյանի վորդին:

ՅԵՐԳ, ՆՎԵՐ Վ. ՂԱՆԼԻՋԱՅԻ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅԱՆԸ

Յեկա յես Ղանլիջա, տեսա կուրկտիվը,
Շրջանի մեջ վորակավոր Ղանլիջա.
Աշխատանքը կդառնար, ինչպես անիվը,
Շրջանիդ մեջ հռչակավոր, Ղանլիջա:

Գյուզդի մեջ զարկած եր ստուլբա,
Լույսի եյին սսլասում մոտ հարյուր որդա,*)
Այդ քո աշխատանքը շատ արդյունք կտա,
Շրջանիդ մեջ հռչակավոր, Ղանլիջա:

Բազնիքը պատրաստ եր, պակաս եր մեկ ջուր,**)
Պահեստում բաժանում եյին բերքերը մաքուր,
Ամբողջ շրջանում տարածվել ե լուր.
Շրջանիդ մեջ հռչակավոր Ղանլիջա:

Գնացի ման յեկա գոմերի սրին,
Վոսկու պես եր, փայլում լծկանի վրին,
Հաշվադահներն ուղիղ աշխոր կգրին,
Կոլխոզներն մեջ պովված, Ղանլիջա:

Լավ եր դեկավարում ընկեր նախագան.
Անընդհատ կաշխատեն մոտիկ հարյուր ջան,
Զկա կոլխոզիդ մեջ վոչ մի պակաս բան,
Շրջանիդ մեջ դու ուժեղ ես, Ղանլիջա:

Լավ ե աշխատում ձեր տրակտորը,
Շատ ուրախ եր անցնում կոլխոզի ուրը,
Վաղուց արդեն մոռացվել ե արորը,
Յերջանիկ ե որդ, Ղանլիջա:

*) Լույսն արդեն բերված ե հորինված ե նախքան լույսը բերելը:

**) Բերված ե նաեւ ջուրը:

Շեղան եմ, կսպասեմ բերքիդ բաշխուան,
Մարդիկ շատ դարձան իմ գնալ—գալուն,
Հիմա թող դարձանան գովասանք տալուն,
Քեռ այնքանը քիչ ե քեզի, Դանիշա:

Այս խաղը հորինել ե Մուսայիլյանի կտանահոսթյան ան
դամ ՀԱՐՔԵՅԱՆԸ — աշուղ Շեղան: Շեղան 42
տարեկան ե, կիսազրագետ: Այս խաղը նա հորինել ե Վ.
Դանիշայի կտանահոսթյունն այցելելուց հետո, վորը հա
մարվում ե շրջանի առաջագործ կտանահոսթյուններից
մեկը:

ԿՈՒՆԵՏԻՎԻ ՅԵՔԵԼ

Նպատակը կատարել ենք,
Թող իմանա Միությունը,
Համատարած կառուցել ենք,
Հաստատ մնա տերությունը:

Լենինի դժով մենք գնացինք,
Սոցիալիզմը կառուցեցինք,
Գոմունիզմին ահա կերթանք,
Հոն ե մեր սեփական տունը:

Համատարած յեղանք այսօր,
Վեր թափեցինք խովն ու աքօր,
Ունենք հիմա շատ տրակտոր,
Հաստատ մնա Միությունը:

Մ Մ Դ Ն Տ

ՓՈԽԱՆՑԻԿԻ ՅԵՐԳԸ *

Մեր կոկեկտիվ ընտանիքը
Պահանջում է փոխանցիկը,
Հարվածային են մարդիկը,
Պահանջում են փոխանցիկը:

Քաջող ուժը պատրաստել ենք,
Բուքը, գութան մենք սրել ենք,
Սաքն ու դաշտը գրավել ենք,
Պահանջում ենք փոխանցիկը:

Շորենն ու գարին գտել ենք
Մեր պլանը կատարել ենք,
Գոմեր, բաղնիք շինել ենք,
Պահանջում ենք փոխանցիկը:

Մեր փոխանցիկ դրոշակը՝
Մեզի փայլող ալ վարդը,
Պայծառ է դաշտի աշխատանքը,
Պահանջում ենք փոխանցիկը:

ՍԱԴԱՅ (Մանուկ Սուքիասյան)

*) Դիրաբլուրի կոլտնտեսությունից փոխանցիկը վերցնելուց մեկ
ապրիլի հետո, յերբ կոլտնտեսությունը ձեռք է բերում նոր նվա-
ճումներ, Սադաքը հորինում է այս յերգը:

ՏՐԱԿՏՈՐԻՆ

Լսեք ասեմ իսկականից,
Տրակտորի վարն իմացեք,
Սոփը պատրաստված պողպատից,
Տրակտորի վարն իմացեք:

Այս մեր յերջանիկ որերում,
Կոլտոգներու լայն դաշտերում,
Պետք է վարենք շատ տեղերում,
Տրակտորի վարն իմացեք:

Տրակտորը առաջ քշենք,
Վոր մեր նպատակին հասնենք,
Մեր պլանը լավ կատարենք,
Տրակտորի վարն իմացեք:

Հինը թողնենք, խոսենք նորը,
Ի՞նչ լավ բան է տրակտորը,
Կեցցե բոլոր մեր բանվորը,
Տրակտորի վարն իմացեք:

Վարի տրակտոր, ջան տրակտոր,
Ակոսներդ իրանց շարքով,
Քեզ պիտի գովեմ հազար տաղով,
Մազմանովիս յերգն իմացեք:

Հորինել է Կիրակոս Մազմանյանը

ՆՈՐ ԿՅՈՆԷ

Անցած դարերում, անցած ուրերում,
Վոչ վոք չեւ տեսել այսպես լավ որեք,
Այդ հին ժամանակ, վոր կար թագաժոր,
Թարդիկը ճնշված՝ աղքատ ու մոլոր:

Նախկին ժամանակ կուլակն էլ, վոր կար,
Ել ավ եր մտածում ջրանցքի համար,
Բայց լավ եր բոլորիկ որենքը յեկավ,
Կուլակի ձեռքից մեր հողը առավ:

Այդ հողը առավ, ավեց աղքատին,
Ջրանցքներ բացեց Անդրը-Կովկասին,
Ել ինչ յես տեսմ այսպես լավ որին,
Վոր մենք չենք տեսել անցյալ դարերին:

Բանվոր գասակարգ, մեծ Ստալինին,
Ուռուտ գոչեցեք մեր հանճարեղին,
Վոր մենք հասել ենք այսպես լավ որին,
Պատը և միշտ կանգնենք նրա թիկունքին:

Հորինել ու յերգում է Կիրակոս Մազմանյանը

ԴԱՌՆԱՅԻ ՄԻ ՊՍՏԻԿ ՏՂԱ

Տեսեք, թե յես ինչ եմ արել
Մինչև հիմա չեմ կարդացել,
Բա ինչ անեմ, վոր սովորեմ,
Լավ է հիմա կարդամ, գրեմ:

Ձեռքս առա թանաք, գրիչ,
Ճգնելով չեղավ վոչինչ,
Տես թե այս իմ ծեր հասակիս,
Վոտս կապում 60 տարիս:

Բա ինչ անեմ, յես վո՞նց անեմ,
Դուք գիտեք, թե յես տգե՞տ եմ,
Բայց են ցարի հին ժամանակ,
Ուսումնս եղավ մեկի կամակ:

Դուք չեք տեսել գաղան ցարին,
Վորը մեղի մխեց քարին,
Ուսում չեւ տա աղքատներին,
Թե ու թիկունք եր՝ զորեքին:

Ինչ կլինի, վոր յես հիմա,
Դառնայի մի պատիկ տղա,
Գրել-կարդալ սովորեյի,
Համով, հոտով բան գրեյի:

Հորինել է

Կիրակոս Մազմանյանը

Ն ՈՐ Տ ՈՆ Ա Ծ Ա Ռ Ի Ն

Պետք ե գովեմ տոնածառը,
Ուրախացիք, ջան յերեխեք,
Յերգով, ցնծությունով խառը,
Ուրախացիք, ջան յերեխեք:

Տոնածառը լավ դարգարենք,
Ծ յուղերին մըզեղեն շաւենք,
Հավաքվենք և շուրջը պարենք,
Ուրախացիք, ջան յերեխեք:

Շիրան գովարանեց ծառը,
Արտասանեց այսքան բառը,
Մեծ ու փոքրիկներով խառը,
Ուրախացիք, ջան յերեխեք:

Հաղորդեալ Շիրանի, 45 տարեկան

ԿՈՒՆ ՈՒ ԿՈՒԼԱԿԸ

(Հիմ օրերից)

Լսեցեք մեր կովի բանը,
Վոչ յեղը կերանք, վոչ թանը,
Դուրս երին, տարան մթանը,
Ա՛խ կուլակը, եղ կուլակը:

Տեսեք, թե մեզի խնչերով,
Դարման տվա՛վ, կովը տարա՛վ,
Կովը կթեց, յեղը կերա՛վ
Ա՛խ, կուլակը, շուն կուլակը:

Հորս ուժուգ տվա՛վ, խաբեց,
Յորենն ուրիշին հափեց,
Մսի հալալ կեսն ել թլափեց,
Ա՛խ, կուլակը, դե՛վ կուլակը:

Նստանք, լացանք մենք յերկու քուր.
— «Ախր քթոցմ դարման տուր».
— «Դարման չունիմ, խոսելիք ե գուր»:
Ա՛խ կուլակը, շուն կուլակը:

ՍԱՐԻՔԵԿ ՅԵՂՈՅՍ.— Սարիքեկը անգրագետ ե, Գյուլքայան
չի կոտնտեսության անգամ: Նրա հայրը և պապը՝ Բաղադյանները,
լեղել են աշուղներ և հորինել են յերգեր, Նրա տղան Սալադը
նսւյնպես հորինում ե: Սարիքեկը զավ հիշում ե նրանց յերգե-
րը: Ինքը 75 տարեկան ե:

ԲԱՏՐԱԿԻ ՏՐՏՈՒՆՔԸ

(հին ուրբերից)

Հայրս ինձ մշակ տվեց՝
մի փոքր հացի.

Մի փոքր հացի ծառայեցի
յերկար տարի:

Ձորս թուփանի տոկոսի տեղ
աշխատեցի,

Աշխատեցի յերկար տարի՝
առանց փողի:

Անգրազեստ հայրս աղից
փող եր առեւ,

Փող եր առեւ, մի բալաթ եւ
աղեն գրեւ,

Յերկար տարի եղ բարաթով
ինձ ճորտ արեւ,

Ինձ ճորտ արեւ, իմ դագուստ
նա միշտ կերեւ:

Հայրս գյուղի հանդապահն եր
յերկար տարի,

Յերկար տարի նա աշխատեց
մի փոքր հացի,

Հայր ու վորդի աշխատեցինք,
յերկար տարի,

Վաշխառուից չաղատվեցինք
յերկար տարի:

Գրեւ ե վարդեստ ՄԱՅՈՒՆ, 81 տարեկան.

ՀԻՆ ԳՅՈՒՂԱՅԻՆ

Հին գյուղացին՝ ցարի գյուղում,
Տգիտութեան մեջն եր լողում,
Կտրված եր լույս աշխարհից,
Հեռու յեր միշտ նորությունից:

Շալե չուխեն՝ ծակ փեշերով,
Վրեն լիքը կարկատանով,
Մորթուց փափախ մի լղրանոց,
Գլխին ունեւր նա մի ծածկոց:

Տրեխները ծակ տղլափով,
Շալե գուլբեն եւ եղ կարգով,
Շապիկ-վարաիկ, կեղտում փթած,
Լվացք անելն եր մոռացված:

Կեսուր-կեսար նորահարսին,
Պիտք ե տեսնեցին քողն յերեսին,
Տան տիրոջ հետ պիտ չխոսեր,
Նորահարսի կարգն եղպես եր:

Գյուղում դպրոց ո՞վ եր տեսել,
Խեղճի տղեն գիրն ի՞նչ գիտեր,
Տերտերն եր, վոր գիր եր գրում,
Իր գրածն եւ զոռով կարգում:

Այժմ գյուղը խորհրդային,
Գարոցներն մեջն ե լողում,

Նոր կենցաղը մեր բոլորին,
Ուրախ սրտով վոգեվորվում:

Գրել է Վորժնադիր Մարցան:

ԺԱՂՈՎՐԳԱԿԱՆ ՏԱՂԵՐ

*
* *

Քեզ նման աննման կա վոչ հաշխարհիս,
Գիտուն եյակ ես, ով իմ նազելիս,
Միբո կիզով յես դառել եմ վառարան,
Մի լինիբ ինձ համար բով, ով իմ նազելիս:

Թելթել ժաղերիցդ բեր ինձի կախա,
Ուղում ես սպանե, ուղում ես ծախա,
Միբովդ վառվելով, դեպի քեզ փախա,
Արա ինձ ճանապարհ, ծով իմ նազելիս:

Խղճալի յեղնիկին մի թողուր կարոս,
Վոսկելթել մազերիցդ տուր ինձի նարոտ*)
Մտածյալ անձիս դու լեր առավոտ,
Հնչե Բադալովիս, ծով իմ նազելիս:

*)ՍԻՐՈ ՆՎԵՐ

Ասել ե ՅԵՂՈ ի ԲԱԴԱԼՅԱՆԸ, ծնված ե 1820 թվին
Այս յերդը դրի յե առնված նրա տղայի՝ ՍԱՐԴԻՆԵՅԻ միջև
բով, վորը ասում ե հիշողությամբ, Բերում ենք նրանից մի քանի
լեռք:

*
*

Քեզ նման աննման կա վոչ հաշխարհիս,
Գիտուն եյակ ես, ով իմ նազելիս,
Սիրո կիզով յես դառել եմ վառարան,
Մի լինիր ինձ համար բով, ով իմ նազելիս:

Թելթել մազերիցդ բեր ինձի կախա,
Ուզում ես սպանե, ուզում ես ծախա.
Սիրովդ վառվելով, դեպի քեզ փախա,
Արա ինձ ճանապարհ, ծո՛ւղ իմ նազելիս:

Խղճալի յեղնեկին մի թողուր կարոտ,
Վոսկեթել մազերիցդ տուր ինձի նարոտ*)
Մտածյալ անձիս դու լեր առավոտ,
Հնչե Բադալովիս, ծո՛ւղ իմ նազելիս:

*)ՍԻՐՈ ՆՎԵՐ

Ասել ե ՅԵՂՈՂ ԲԱԴԱԼՅԱՆԸ, ծնված ե 1820 թվին
Այս յերգը գրել յե առնված նրա տղայի՝ ՍԱՐԴԵՆԿԻ միջև
բով, վորը ասում ե հիշողությամբ: Բերում ենք նրանից մի քանի
էրգ:

Ուրախության ուր ե այսոր,
Լից, տուր քամինք՝ թմար, թմար,
Ուտենք խմենք ի միասին,
Հաղենք, կապենք՝ խմար, խմար:

Ի միասին ուրախանանք,
Մեկս մեկի տունը գնանք,
Գինին խմենք, զվարճանանք,
Իւնենք մաքուր՝ — բասը — բասը:

Եկեք սիրով մի խաղ ասենք,
Մեկս ասենք, մեկս լսենք,
Ուրիշներին չբաժրասենք,
Զերթանք չարոց՝ դասը, դասը:

Լից տուր խմենք, լավ աբաղ ա,
Բիֆերս սաստիկ չաղա,
Սիրահանս, մի պար խաղա,
Շաքար բաժնենք՝ մասը, մասը...

Զայի վրա մի — մի ողի,
Բազալովը սեր չի փողի,
Վերջը բուրդ ա փող սիրողի,
Կերթա չարոց՝ դասը — դասը:

Ասեւ ե աշուղ Յեղո Բաղալյանը:

Նա յեղեւ ե արհեստավոր: Այս յերդը ասեւ ե այն ժամ —
Նաեւ, յերբ տոմանացընէ ե իր վերջուն:

Սրի գնանք յիս դու-սեյրան,
Եղ շեկլեկ մազերուդ մատաղ,
Նաղ մի եմե յիս քեզ հեյրան,
Բո սիրուն մազերուդ մատաղ:

Պտուղ-պտուղ քրտնել ես,
Բաղնիքիցը նոր ելել ես,
Յելել, Բաշ Սոնա դառել ես,
Վորդյակ ես, մազերուդ մատաղ:

Խոսելում՝ խելքս տանում ես,
Մոտս՝ յերեսդ բանում ես,
Ինչ անեմ, վոր հաղ տնում ես,
Հաղ արա, հազերուդ մատաղ:

Թե վոր սրտով սիրական ես,
Մե հեղմ ոթալդ տանես,
Բազալովի մեկ բալան ես,
Սանդոցու *) մազերուդ մատաղ:

*) Համեմատում ե ոսմեղերի բերանին ընկած թել-թել
մազերի հետ.

ԱՍԵՎ Ե ՅԵՂՈ ԲԱԴԱԼՅԱՆԸ

* *

Աչք ու ունքդ չեմ տա աշխարհիս մալին,
Ջանս ղուրբան կենեմ յերեսիդ խալին,
Քրքուլի պես իջա վարդերի տալին *)
Քեզ պեսին պետք է անմահական բաղ:

Սիրուդ սիրահարին մի թողուր լալու,
Մեջուռն դառած՝ կերթամ քեզիման դալու:
Ծաբավելուց մեկ սառ ջուր տուր խմելու,
Դու յես Սարիբեկին առաջ աղբյուրը պաղ:

*) Վարդենու հյուղին:

Ասեւ եւ ՍԱՐԻԲԵԿԸ. աշուղ Յեղի Բաղալյանի աղան, վաքը.
Ֆեբրվարի 78 տարեկան է:

ՍԻՐԵԿԱՆԻ ՅԵՐԳԸ

Թողեք գովեմ յես իմ յարին,
Սաբար տարեք իրա, նանին.
Սեր եմ գցել անմահին,
Շորորա յարս, շորորա:

Պուճուր գլուխ շեկլիկ մաղով,
Քեզ կտանեմ տաքանտաղով,
Հարսանիք կանեմ հազար նաղով,
Շորորա յարս, շորորա:

Ունքեր ունիս կամար-կամար,
Քեզ կբերեմ վոսկե քյաճար,
Քեզ կբերեմ ինձի, համար,
Շորորա յարս, շորորա:

Աչքեր ունիս կապուտ շուշա,
Բիւրք երես, կարմիր թուշա,
Սիրեկանիս պաքն անուշ ա,
Շորորա յարս, շորորա:

Թշներ ունիս անուշ հոտով,
Մեր տունն եկար դու քո վոտով,
Քեզ կպահեմ շերի ողով*),
Շորորա յարս, շորորա:

*) Զարդարված. շքեղ

Ասեւ եւ աշուղ Սարիբեկի յեղբայրը՝ ՄԱԻՇԵՂԻ:

ՄԱՐԱԼ ՇՈՒՇՈՒ, ԶԵՅՐԱՆ ՇՈՒՇՈՒ

Դու ելել ես, կերթաս կալը,
Ինձի վառեց քո ման գալը,
Շատ սիրուն ե ճակտիդ խալը,
Մարալ շուշո, ջեյրան Շուշո:

Բանըմ ըսեմ արագ- արագ,
Ո՞վ եր տեսել եսպես կրակ,
Շուշոն հաստ ե, յարը բարակ,
Մարալ Շուշո, ջեյրան Շուշո:

Եսոր քեզի չայը տեսա,
Մորդ եղնիմ ազիզ փեսա,
Հորս դրկես վարդով քիսա,
Մարալ Շուշո, ջեյրան Շուշո:

Հուրի փերին քեզ նման չե,
Կարմիր վարդը մոտդ բան չե,
Ինձ քեզ համար յար ճանանչե,
Մարալ Շուշո, ջեյրան Շուշո:

Մարալադի սկի գեղը
Հալալ-մաշալ սրտիս յեղը,
Պագնեմ հոնքերուդ մեջտեղը,
Մարալ Շուշո, ջեյրան Շուշո:

Մարալադի գլխու գարդը
Մադոյենց*) տունն ընկնի ջարդը,

*) Մադոն Աղբուլադի կուլաներից եր, փորը աղջիկը չի
ավել չթափորին:

Պաթեն թողին՝ կերան տարթը**)
Մարալ Շուշո, ջեյրան Շուշո:

Յես Ասոն եմ, անթեղ ծիտ եմ,
Բլբուլի պես խոսալ գիտեմ,
Թուշի պագնեմ, հոգիդ ուտեմ,
Մարալ Շուշո, ջեյրան Շուշո:

**) Տարթը անհարկում ե այն կուլակ տղային, վերին տվել եմ
աղջիկը: Մանտթությունները գրվում ե ըստ հեղինակի ըաց-
աբության:

Ասել ե՝ Հերթեվցյան Ասատուր, 50 տարեկան:

Այս յերգը տարբեր վարջանտներով յերգվում ե Աղբուլադի
հարեման գյուղերում:

ԽՆՁՈՐ, ՔԵՁԻ Ո՛ՎԱ ՂՐԿԵ

1.

Աչքս խնձոր, ջանս խնձոր,
 Խնձոր քեզի ո՛վ ա ղրկե,
 Յարիս հոտը քեզնից կգա,
 Խնձոր, քեզի ո՛վ ա ղրկե:

2.

Խնձորը ծառից կեղնի,
 Գետնին կնկնի՝ խալ-խալ կեղնի,
 Քեզ սիրողը ժալուկ կեղնի,
 Խնձոր, քեզի ո՛վ ա ղրկե:

3.

Խնձոր քեզի ո՛վ ա խածե,
 Չորս կողմզե՜ ել արծաթած ե,
 Քեզի մեզ համար դարկած ե,
 Խնձոր, քեզի յարս ե դարկե:

Ասեւ ե Թափանկեցի ՍԱՄՎԵԼ ԳԵՏՐՈՍՅԱՆԸ

ԳՈՒԹԱՆԻ ՅԵՐԳԸ

Մօռին ըսաց—ուզեմ գուզեմ,
 Ափսոս մի վերջոյ կուզ եմ,
 Սասկեփից*) լավ լուծ գոմեշ գուզեմ,
 Յես գութանի խերին դուրբան:

Ժնջիւն ըսաց—ուզանվել եմ,
 Լծկանի հետ գուզանվել եմ,
 Նոր հարսի պես բեղանվել եմ,
 Յես գութանի խերին դուրբան:

Յեզն ըսաց—դայրայթ քաշ**) եմ,
 Ճիպոտ տալուց լավ կքաշեմ,
 Ղոռադա գոմեշներուն կմաշեմ,
 Յես գութանի ցելին դուրբան:

Մաճկաւն ըսաց—լավ կվարեմ,
 Ղալը միջնակին կհանեմ,
 Հոտաղներուն կասեմ կերեք,
 Յես գութանի ցելին դուրբան:

Այ կնանիք գիշերհանա խաշլի երեք,
 Հոտաղներուն կասեմ՝ կերեք,
 Շուղուլ մոտկամին***) գուրս բերեք,
 Յես գութանի ցելին դուրբան:

*) Վարի ժամանակ դժվար աեղը լծվող գոմեշն է:

**) Գատող, դիմացկուն:

***) Անվորակ վար անող:

Յերգում ե Թորոս Մկրտչյանը 96 ամյա ծերունի Թափանկեցի:

Իւր կյանքում յերեք չի հիվանդացել: Ըստ իւր ասածի այս յերգը յերգվել ե ավելի քան հարյուր տարի առաջ:

ԳԱԼԻ ՅԵՐԳԷ

Հորովե՛ր, հորովե՛ր
Ա՛յ, յեղը ջան,
Հո, հո, հո յեղը ջան,
Կալ արա՛, կալ արա՛:

Կալս թեղ արա՛, յեղը ջան.
Կալս դարձան արա.
Հորովե՛ր, հորովե՛ր
Հո՛ւ՛ր, հո՛ւ՛ր, հորովե՛ր

Տասը սեւ կալ եմ երե,
Եքվան պիտի թեղ անեմ,
Հորովե՛ր, հորովե՛ր յեղը ջան:

Այ, կնանիք կալը յեղանենք,
Կալը թեղ անենք, թեղ անենք,
Հո, հո, հո յեղը ջան, հորովե՛ր

Յերգում ե Թորոս Մկրտչյանը

Իր տսելով այս յերգը նա լսել ե իր պապից՝ Յերգումի շատ
դուրեկան ձայնով ե ժողովրդական գեղեցիկ յեղանակով:

ՀՈՐՈՎԵՐ

Ողուր դոմեշ, հափուկ գնա,
Ղաշխա վայսդկեն հեռ մի մնա,
Լուծի քաշե քո շինքին,
Վոք չհանեմ յես քո կաշին.
Հոյ, հորովե՛ր, հո՛յ, հո՛, հո՛, հո՛ ..

Ակը թոլ արա, հո՛, հո՛, հո՛, հո՛.—
Թեղեքը վրա ալա,
Միջնակը վրա բեր, շարաֆ ջան, հո՛, հո՛, հո՛...

Յերգում ե 68 տարեկան ԱՌԱՔԵՆԻ ՅԵՂԻԱԶԱՐՅԱՆԸ

(Դերաբլաբ)

ԱՌԱՎՆԵՐ

ՎԵՋԻՐԻ ՄԻ ՇԱՀԻՆ

Ռուսաց թագավորը մի վեզիր է ունենում: Խաբ-
պախ և խարեբա մարդ է լինում եղ վեզիրը, դրա հա-
մար ել թագավորը շատ է սիրում նրան: Դե, թագա-
վորը հենց ինքն էլ ամենամեծ խարդախն էր:

Մի օր սա կանչում է վեզիրին և ասում.

— Քառասուն տարի դու հավատարիմ ծառայել ես
թագավորական տանը: Աստծո հրամանով յես ուզում
եմ վարձատրել քեզ դրա համար: Ասա, ի՞նչ ես ուզում
իմ թագավորությունից, վոր նվիրեմ քեզ:

— Թագավորն ապրած կենա, — ասում է վեզիրը, —
քեզ յերկար կյանք և սրիդ զորություն եմ ուզում,
ուրիշ վոչինչ:

Թագավորը պնդում է, թե՛ չէ, ասա ի՞նչ ես ու-
զում, վոր ընծայեմ քեզ: Վեզիրը մտածում է, մտա-
ծում, վերջն ասում է.

— Լավ, թագավորն ապրած կենա: Մեծ է քո վո-
րմությունը, բայց յես փոքրիկ բան կուզեմ: Տուր
ինձ մի թուղթ, վոր յես իրավունք ունենամ քո թա-
գավորության մեջ յեղած ամեն մի աղջկանից, ամեն
մի քաչալից և՛ ամեն մի եշից մի մի շահի տուրք հա-
վաքել:

Թագավորը քահ-քահ ծիծաղում է վեզիրի խոսքի
վրա և իսկույն տալիս նրա ուզածը: Հենց եղ օրը վե-
զիրը ճամփա յե ընկնում և շրջելով տերության գյու-
ղերն ու քաղաքները, իր շահիներն է հավաքում պա-
տահած ամեն մի աղջկա, քաչալի ու եշի համար: Եղ-

պես շրջելով աշխարհը, մի որ ել համարում է մեր Նալ-
բանդ գյուղը: Գյուղի ղրաղին, ջաղացի առաջ ռաստ
է գալիս մեր Զորանանց Վասիլին, վորն աղունն աղա-
ցել, բարձել եր եշին և ճամփա յեր ընկնում զեպի
տուն:

Կանգնիր, այ մարդ,—հրամայում է վեզիրը—
Դու մի շահի յիս տալու ինձ:

—Մի շահի: Ի՞նչ շահի,—զարմանում է մար-
դը:

—Շահի ելի, իսկական շահի, եշիդ տնւրքը:

—Յես եշի տուրքը վաղուց եմ տվել:

—Ձե, տվածիցդ ջոկ, նոր տուրք, թագավորի
հրամանն է:

—Ի՞նչ թագավոր, ի՞նչ շահի, զնա բանիդ,—
բարկանում է մարդը և քշում է եշը:

Նստեղ վեզիրս կատաղում է, թե դու վիսց ըլես,
վոր թագավորին դեմ գնամ, դե դեմ գնալը հիմի
կտեսնես: Ու տուր թե կտաս՝ Վասիլիս գլխին:

Տուր ու դժբոցով նրանք հասնում են գյուղ,
դիվանբաշոյ մոտ: Դիվանբաշին նայում է վեզիրի
թուղթը և ասում է.

—Մարդը դրուստ է ասում, Վասիլ, շահին պիտի
տաս. հրամանը թագավորից է:

—Ձեռ քաշեք, այ ջանք,—պատասխանում է
Վասիլը,—թողեք զնամ տուն,—եշիս քուռակը հիմի
սոված սատկեց:

—Ի՞նչ, քուռակը,—վրա յե պրծնում վեզիրը,
—ուրեմն քուռակ ել կա: Դե, մի շահի ել պիտի
տաս:

—Դե լավ, հանաքը դրանց դրեք, յես պարապ չեմ
ձեզ պես,—սբանդում է Վասիլը,—յերեք աղջիկ ե-
րեխան տանն սպասում են աչքերը ճամփին, թե յերբ

եմ ալիքը տանելու, վոր հաց թխվի, իսկ դուք եստեղ
գյալաջի յեք սկսել: Յես ձեք գլուխը չունեմ:

—Յերեք աղջիկ յերեխան,—նորից վրա յե պըր-
ծնում վեզիրը,—դե յերեք շահի ել ավելացրու:

Նստեղ Վասիլիս ծունկը կոտրում է: Տեսնում է,
վոր ել պրծնում չկա, ասում է՝ աղաչեմ, բալի խղճան,
թողնեն զնամ: Մարդ են, չե: Յեվ փափախը հանում ու
խոնարհ գլուխ է տալիս, թե՛ աղա ջան, ջամ եմ
ի՛նդրում, թող զնամ: Տեսնելով Վասիլի քաջալ գլուխը
վեզիրն ուրախացած կանչում է.

—Քաջալ ես, համ, դե մի շահի ել ավելացրու:

—Մարդու մեկը մի կին է ունենում: Մի որ կինն ասում է, թե՛ ա՛յ մարդ, յեկողը ձմեռ է, վեր կաց կովը տար քաղաք, ծախի, մի քիչ կտոր առ բեր, ձմեռվա պատրաստութ՜յուն տեսնենք:—Կովը վոր ծախեմ, լինչ կտոր բերեմ,—հարցնում է մարդը:—Յեռ գիտեմ՝ մտահան կանես, ա՛յ դոնկի Բադդասար,—պատասխանում է կինը,—բեր մատներդ կտորներ կապեմ, վորից կապեմ, նրանցից ել կբերես: Եղպես ել անում է: Մարդը գնում է քաղաք, կովը ծախում է, կտորը մոռանում, իրիկունը գալիս ետուն: «Բա մըր է կտորը,—հարցնում է կինը: Մոռացա,—մեղա յե գալիս մարդը: Բա մատներդ մտիկ չարժիր,—բարկանում է կինը: Դե, առավոտը վեր կաց, գնա առ ու արի: Մարդն առավոտը վեր է կենում, շորերը հագնում, վոր գնա կտոր առնելու: Դրանք մի չորան բարեկամ են ունենում, վորն եղ գիշերը դոնախ եր յեկել: Մարդը շորերը հագնում է, կինը դոնախի փափաղը գնում է դրա գլխին, չունքի Բադդասարի փափախը հին եր: Բադդասար ճամփա յե ընկնում, հասնում քաղաքի զրաղը, հավաքի կուշտը: Չոքում է, վոր ձեռքերը լվանա, հանկարծ ջրի մեջ տեսնում է իր շվաքը չորանի փափախով:

—Վա՛յ քո հերն անիծեմ, կնիկ,—բարկանում է Բադդասարը,—ես լինչ ես արել, ինձ թողել ես քնած, չորանին վեր կացրել, զրկել քաղաք:

Ուզունլարում արջը մի քանի տեղ վնասում է: Դյուղի տերտերը, խաններին ու պաշտունիքը հավաքվում են, թե գնանք արջին սպանենք: Գնում են սարը, կանգնում քարափի գլխին, տեսնում են արջը հրեն քարի տակին քոթոթների հետ խաղ է անում: Նստեղ, սարսափը պատում է բոլորին, ուզում են յետ փախչել քայց տերտերն ասում է՝ կացեք սպանենք: Յես սուրբ եմ, արջն ինձ բան չի անի, դուք թուկով կապեք ինձ, քարափից կախեք, գնամ արջին սպանեմ, դամ: Եղպես ել անում են: Բայց հենց վոր տերտերին կախում են, արջը բռնում է նրա գլխից: Տերտերս դուռում է, թե քաշեք վեր, արջն իմ սրբութ՜յունը մտահան է արել: Իշխանները քաշում են վերե, արջը ձգում է դեպի ներքե, սրանք քաշում են, նա ձգում է, վերջը տերտերի գլուխը լնում է արջին, մարմինը բարձրանում վերե: Իշխանները տեսնում են, վոր տերտերի գլուխը վրեն չի: Բայց գլխի չեն ընկնում, թե ինչ է պատահել:

—Աղա,—ասում է մեկը,—տերտերին, վոր կախեցինք, գլուխը վրեն եր:

Մյուսը, թե՛

—Տերտերին լինչ գլուխ, անբտերն ել գլուխ կունենամ. հենց եղպես եր, վոր կար:

Ահալին վեճ է առաջանում: Վորոշում են տերտերին տանեն տուն և եղ մասին հարցնեն իրից-կնկանից:

—Իրեցկին,—ասում են,—տերտերը, վոր մեղ հետ հանդն եկավ, գլուխը վրեն եր:

—Դիդեմ վոչ, գլուխն ինչ է,—ասում է կինը,—միայն վոր մտիկ եյի անում վրեն, ուսերից վերեն, ահագին մաղ կարա:

Այս առակները հորինել է Նալբանդյան Նահապետը (Նալբանդ գյուղից): Նահապետը կոտնաեռակտն է, անդրապետ, 70 տարեկան: Վերջին առակը նա հորինել է Ուզունլարի տերտերի մաս բաժրակ յեղած ժամանակ:

ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹՈՒՆ

ԵԶ

Յերկու խոսք	17
Հալապենք և մշակենք ժողովրդական հայրուստ բանհյուսությունը Ա. Հովսեփյան, Ա. Գրիգորյան	9
Լենին	19
Մեծ Լենին	21
Ընկ. Ստալինին	23
Հղիք ևս դու մեծ Ստալին	24
Պիտի մնա հավիտյան	25
Մեր հայր Ստալինին	26
Իմաստուն Ստալինին	27
Նվեր ընկեր Ստալինին	28
Լսեցեք ընկերներ	30
Նոր Ուրենք ստեղծող մեծ Ստալինին	31
Որենքը	32
Ընկեր Բերեային	33
Կազմիր Բանակին	37
Հայրենիքի դավաճաններին	38
Գոլխողի յերգը	39
Յերգ, նվեր Վ. Հանրիշայի կոլանտեսությանը	41
Գոլեկտիվի յերգը	43
Փոխանցիկի յերգը	44
Տրակտորին	45
Նոր կյանք	46
Դառնայի մի պատիկ տղա	47

Նոր տոնածառին	48
Կովն ու կուլակը	49
Բատրակի տրտունջը	50
Հին գյուղացին	51
Քեզ նման աննման	55
Ուրախության որ և այսոր	56
Արի զնանք	57
Աչք ու ունքդ	58
Սիրականի յերգը	59
Մարալ Շուշո Ջեյրանի Շուշո	60
Խնձոր քեզի ովա զրկի	62
Գուլթանի յերգը	63
Կալի յերգը	64
Հոբովել	65
Վեղերի մի շահին	68
Դոնկի Բախդասարը	72
Տեր հոր գլուխը	73



ՀՀ Ազգային գրադարան



NL0383504

33230